652 Ծ, իմ Փրկիչ, ես Քեզ եմ փափագում,

1. Ծ, իմ Փրկիչ, ես Քեզ եմ փափագում,
Որ անդորր ես շնորհում իմ հոգուն,
Առաջնորդում, սովորեցնում հստակ,
Որ Դու ես ճամփան ճշմարտության:

Կարիքդ ունեմ, սիրելի՛ Տեր,
Թե՛ ցերեկ, թե՛ գիշեր:
Բացի Քեզնից, սիրելի՛ Տեր,
Չունեմ ուրիշ ընկեր,
Տա՛ր ինձ միշտ կամքիդ պես անպարփակ,
Կարիքդ ունեմ, սիրելի՛ Տեր,
Բուժի՛ր հոգուս վերքերն,
Եղի՛ր հոգուս ընկեր:

2. Այս կյանքը միշտ բերում է վիշտ ու ցավ,
Մեղքն էլ ճնշում սրտիս անդադար,
Քանզի առանց Քեզ չեմ կարող ապրել,
Փրկի՛չ, ուժ տուր՝ Քո ճամփով քայլեմ:

3. Դու բնակվիր, ո՛վ Փրկիչ, իմ սրտում,
Որ ապրեմ Քեզ համար այս կյանքում,
Ազատիր՝ լինեմ Քեզ հավատարիմ.
Միայն Դու ես կյանքը ճշմարիտ: